Զատկի ասույթներ, առածներ

- ✓ Զատիկն ասել ա՝ հենց գամ, արմանաս, հենց գնամ, զարմանաս:
- ✓ Կարմիր ձուն Զատկին կսազե:
- ✓ Զատկե Զատիկ է, նավակատիկ է, չամչե հատիկ է:
- ✓ Հավը կուտե հատիկ, հատիկ, ծով ձմեռեն կելնե Զատիկ:
- ✓ Զատիկ ավելի շուտ եկավ, քան նավակատիկը:
- ✓ Զատիկը թռի, մեր կովը ծնի:
- ✓ Կուշտ ուտելը Զատկի իրիկունն է:
- ✓ Կարմիր ձու տուր, կարմիր օր տամ:
- ✓ Զատիկը առանց ձվի չի լինի:
- ✓ Զատկից հետո կարմիր հավկիթ:

Ծաղկազարդի, Զատիկի ասացվածքներ

- ✓ Մշակ, ցանե, թող մատներեդ հորդին սերմեր լուսեղեն:
- ✓ Էս մի բուռը՝ թռչուններին, էս մի բուռը՝ մուկ, մորեխներին, էս մի բուռը՝ անցվորներին, էս մի բուռն էլ՝ բոլորին:
- ✓ Բուն Բարեկենդան մինչև Զատիկ՝ 49-ը հատիկ:
- ✓ Ակլատիզ, բռնեբիբիս, արի մեր տուն, կախվիր երթիս:
- ✓ Պաս չբռնողը Զատկի համը չի գիտենա:
- ✓ Ակլատիզը փետելով Զատիկը շուտ չես բերի:
- ✓ Զատիկ, զատիկ, նավակատիկ, արի նստի մեր տան մոտիկ:
- ✓ Հավը կուտե հատիկ, հատիկ, ծով ձմեռեն կելնե Զատիկ:
- ✓ Զարդ, զարդ, Ծաղկազարդ, Ծաղկազարդ ու Ծառզարդար:
- ✓ Զատիկն առանց ձվի չի լինի:
- ✓ Ձմեռն անցավ, գարուն եկավ, Պասը գնաց, Ուտիսն եկավ:

- ✓ Կուշտ ուտելը Զատկի իրիկունն է:
- ✓ Զատկեզատիկ է, նավակատիկ է, չամչե հատիկ է:
- ✓ Զատիկն ասել է. – Հենց գամ՝ արմանաս, հենց գնամ՝ զարմանաս:
- ✓ Եթե ցորենի հատը հողի մեջ չընկնի և մեռնի, ինքը մենակ կմնա: Բայց եթե մեռնի՝ շատ պտուղ կբերի:
- ✓ Քրիստոս հարեավ ի մեռելոց, օրհնյալ է հարությունը Քրիստոսի, մեզ և ձեզ մեծ ավետիս: